# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## † ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

(† 19/31 դեկտեմբերի 1892 թ.)

Չկայ այլ ևս Գրիգոր Արծրունին, նա որ քսան տարի շարունակ և անընդհատ կերպով մեր հասարակութեան ամենից շատ ուշք գրաւած անձնաւորութիւնն է եղած։

Գրիգոր Արծրունին ասպարէզ եկաւ և հէնց առաջին բոպէից ցնցեց հասարակութեան ուշադրութիւնը։ Հում երկաթին մագնիսականութիւն հաղորդուեց, որի հոսանքը իսկոյն երկու ուղղութիւնների ջոկուեց՝ երկու ծայրերում կենտրոնանալով։ Եւ հանգուցեալը եղաւ մինչև իւր մահը մի մագնիսական սլաք հասարակաց կարծիքի մեզանում, հասարակաց ոգին իւր մէջ կենտրոնացնելով աւելի քան որ և է մէկը նորա—ժամանակակիցներից։

Արծրունին ստեղծուած էր զարթեցնելու և արթնութեան մէջ պահելու հասարակաց կարծիքը, իւր տեսողութիւնը տարածելով ազգի բոլոր խաւերի վերայ և կեանքի բոլոր շողերը մի պրիզմայի միջով անցկացնելով։ Այդ պրիզման իւրն էր, նորանից ցոլացող գոյներով նա գոյն տուեց ժամանակի կեանքին, որպէս ոչ մէկը նորանից առաջ և նորա կենդանութեան օրերով։

Բայց մխիթարական է որ այն յառաջատար հոսանքը, որին հանգուցեալը մեծ մղում տուեց, աճեց և ճիւղաւորուեց դեռ ևս նշանաւոր պուբլիցիստի կենդանութեան օրերով նաև նորանից անկախ։ «Մշակ» լրագիրը որ դրոշակ էր մտքերի նոր հոսանքների, դառաւ օրգան կուսակցութեան պարագլխի, և իբրև այդպիսին՝ նա կուսակցութեան գլխաւոր ղեկավարող թերթը մնաց իւր հիմնադրի ձեռքում մինչ վերջին բոպէն, շնորհիւ այն հաւատի, որ իմացել էր նա ներշնչել դէպի ինքը երիտասարդութեան մէջ և ժողովրդական խաւերում։

Մեր յառաջդիմական հոսանքը մտքեր մշակելու գործում աւելի ընդարձակ ծաւալ ստացաւ, քան թէ այն, ինչ հանգուցեալի

օրգանը միւև վերջը կարողացաւ արտայայտել. բայց Արծրունուն մնում է մեծ պատիւը որ նա իւր օրգանի միջոցով ղեկավարեց հասարակաց կարծիքը կարևորագոյն կռիւներում և համակրութիւն վաստակեց ամբողջ յառաջդիմական կուսակցութեան կողմից, հնարաւորութիւն տալով բոլոր յառաջդիմականներին իրանց զգալ մի մարմին, երբ խնդիրը ընդհանուր կուսակցութեան գործնական դատերի պաշտպանելու մէջն էր։

Իւր կուսակցութիւնը ստեղծելու համար, նա նախ մտքեր քարոզեց. դորանից առատ կերպով օգուտեց նաև նորագոյն գրականութիւնը, որը իւր ներկայացուցիչներից շատերի անունով կապուած է «Մշակ»-ի առաջին տասնամեայ շրջանի գործունէութեան հետ։ Երբ իւր քարոզած ուղղութեամբ սնուած մատաղ սերունդը կեանքի մէջ գործելու չափահասութեան հասաւ, Արծրունին իւր լրագրով զբաղուեց այդ սերնդից մի կուսակցութիւն կազմակերպելու և նրանով մեր կեանքում հինը նորով փոխարինելու. դպրոցներ, ընկերութիւններ, էջմիածինը իւր օրգաններով, որպէս նաև ընդհանուր հայկական կեանքը՝ զգացին այդ նոր հոսանքի առողջարար ոյժը։

Գրիգոր Արծրունու, որպէս կուսակցութեան պարագլխի, մեծ արժանիքը այն էր, որ նա, և դորանում առաջինը մեզանում, — իմացաւ կուսակցական պայքարների մէջ ուղղութիւն պահպանել, յարմարացնելով այդ ուղղութիւնը իւր քարոզած մտքերի ուղղութեանը և այդպիսով կեանքը մղելով դէպի մտքի շաւիղը։ Գրիգոր Արծրունին իսկական հիմնադիրն է գաղափարական կուսակցական կեանքի մեզանում, որ, մեր կարծիքով՝ հանգուցեալի ամենամեծ տիտղոսը կը մնայ մեր կուլտուրական կեանքի զարգացման պատմութեան մէջ։

Մենք այս տողերով ուզեցինք գծել հանգուցեալի հրապարակախօսական գործունէութեան միայն գրական կողմերը, որոնց համար նա գնահատութեան արժանի է մեր աչքում։

Այն պատիւը, որին ազգը նորան արժանացրեց, նա արդարութեամբ վաստակեց։

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ